ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ

ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գործառույթներն իրականացնող փորձագետ ներգրավելու համար

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հայտարարում է մրցույթ ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնում փորձագետ ներգրավելու համար: Փորձագետը ներգրավվում է Աշխատակազմում ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գործառույթներն իրականացնելու նպատակով:

Աշխատանքային պարտականություններն են՝

- ՀՀ կառավարության 2022թ. սեպտեմբերի 22-ի թիվ 1481-Ն որոշմամբ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգով հանրակրթական ուսումնական հաստատությունների բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցների ու նորմատիվների հաստատման նոր ընթացակարգի հետ կապված գործառույթների իրականացում,
- մասնակցություն ՀՀ Արմավիրի մարզպետի /այսուհետև Մարզպետ/ ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացմանն ուղղված աշխատանքների կատարմանը,
- ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին վերապահված լիազորությունների ՀՀ Արմավիրի մարզի /այսուհետև Մարզ/ հաշվապահական հաշվառման բնագավառում նոր փոփոխությունների իրականացման ապահովում,
- Մարզի ֆինանսական գործունեության ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքների իրականացում,
- Մարզի ֆինանսական զարգացման հնարավորությունների վերլուծություն, ներոլորտային գերակայությունների սահմանում և հնարավոր ֆինանսական աղբյուրների նախանշում,
- Մասնավոր հատվածի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված համագործակցության, ինչպես նաև մասնավոր ներդրումային առաջարկների մշակմանն աջակցության ցուցաբերման, ներդրումային էլեկտրոնային վարման աշխատանքների իրականացում,
- Մարզի համայնքներում տարբեր ֆինանսավորման աղբյուրներով իրականացվող սուբվենցիոն ծրագրերի մշակմանն ուղղված աշխատանքներին մասնակցություն, ինչպես նաև հաշվապահական հաշվառման ոլորտներին առնչվող փաստաթղթերի պատրաստում,
- Մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող ՊՈԱԿ–ների, ինչպես նաև պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսեր ունեցող առևտրային ընկերությունների հիմնական միջոցների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, ամփոփման աշխատանքների իրականացում,
- Պետական բյուջեով նախատեսված՝ Աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերի հաշվապահական հաշվառման ֆինանսական հաշվետվությունների (ամսական, եռամսյակային, տարեկան) կազմման և լիազոր մարմիններ ներկայացման աշխատանքների իրականացում,
- մասնակցություն հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով Աշխատակազմի ակտիվների և պարտավորությունների գույքագրման աշխատանքներին :

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի
2. Տնտեսագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն,
3. Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ,
4. Գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,
5. Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի փորձագետ չի թույլատրվում ներգրավել այն անձին, ով պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- դիմում ՀՀ Արմավիրի աշխատակազմի գլխավոր քարտուղարի անունով (ձևը կցվում է)
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները բնօրինակների հետ միասին,
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար 3Х4 սմ չափսի,
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
- հայտարարություն (ձևը կցվում է)

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Աշխատավայրը՝ ք. Արմավիր, Աբովյան 71: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 09:00–13:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումներն ընդունվում են 2026 թվականի հունվարի 7-ից 12-ը ներառյալ:

Ընտրություն կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին (ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ.՝ 0-237-060 90 10 10 (014), էլեկտրոնային փոստի հասցեն՝ **armavir.kadrer@mta.gov.am**):

Հայտարարված է 07.01.2026թ.
Վերջին ժամկետը՝ 12.01.2026թ.
Հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71

Ձև N 2

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Գլխավոր քարտուղար

_____
(համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի
պաշտոնը, անունը, ազգանունը)

քաղաքացի ----------ից
(անունը, ազգանունը)

---------- հեռախոսահամարը

---------- էլեկտրոնային հասցեն

Դ Ի Մ ՈՒ Մ

Ծանոթանալով հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ.

2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ.

3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ.

4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____էջ.

5. Այլ _____ էջ:

Առդիր ----- էջ:

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____
(դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(անունը, ազգանունը և հայրանունը)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով՝ հայտնում եմ հետևյալը.

Պաշտոնից ազատվել կամ վերջին մեկ տարվա ընթացքում ծառայությունը դադարեցվել է՝

1. Կարգապահական տույժ կիրառելու պատճառով _____
(այո, ոչ)

2. Օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու պատճառով _____
(այո, ոչ)

3. Օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու պատճառով _____
(այո, ոչ)

4. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու պատճառով _____
(այո, ոչ)

5. ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու պատճառով _____
(այո, ոչ)

6. Ուժի մեջ մտած՝ կայացված մեղադրական դատավճռի պատճառով _____
(այո, ոչ)

7. Երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու պատճառով _____
(այո, ոչ)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

«------»---------- 2026 թ.

_____
Լրացնողի անուն, ազգանունը, ստորագրություն